

Դ. ՎԱՐՈՒԺԱՆԻ «ՀԱՐՃԸ» ՎԻՊԵՐԳԸ

Խ. Գ. ՎԱՐԳԱՆՅԱՆ

«Հարճը» վիպերգի նյութը Դանիել Վարուժանին բացառիկ հնարավորությամբ է ընձեռել լայն կտավով հեթանոսորեն մեծարելու առնականությունն ու կանացիությունը և դրանցով՝ սերը... կյանքի գեղեցկության ու վեհության հավիտենական պայմանը:

Նյութը մշակվել է ճիշտ ժամանակին՝ 1910-ին, Սեբաստիայում, երբ բանաստեղծը դեմոսթենեսյան կրթոտությամբ բուռն պայքար էր հայտարարել «գավառի բյուրանուն նախապաշարումներուն», երբ միաժամանակ ստեղծում էր դարերով արմատացած այդ նախապաշարումների դեմ ուղղված իր հեթանոս լավագույն պատկերներից մի քանիսը («Հեթանոսական», «... Ո՛վ Լալագե», «Ականջներուն», «Գրգանք», «Բեգաս») և երբ մի խարտիշահեր հայուհուն՝ Արաքսի Թաշճյանի հետ տոնում էր այնքան դրամատիկ փուլերից անցած վիպական սիրո հաղթանակը՝ դարձյալ դարերով կարծրացած հասարակական նախապաշարումների դեմ:

Հեթանոս շարքի քննությամբ ցույց ենք տվել¹, որ Վարուժանի կերտած պատկերները ոգով, կյանքը վերարտադրելու և ապրելու եղանակով են հեթանոս, որ դրանցում հեթանոսականը ամենից առաջ բանաստեղծի բարոյա-քաղաքացիական կեցվածքն է: Մի կեցվածք, որ գեղագիտորեն վավերացվել է նպատակասլացորեն կիրառված պայմանական ու խորհրդանշական ձևերի շնորհիվ, որոնք էլ ստեղծում են անցյալի, հեթանոս դարերի կյանքի պարանքը:

Ինչ վերաբերում է «Հարճի» պատմական հենքին, ապա այստեղ ևս պայմանական շատ բան կա: «Հարճում» խոսվում է Տիրան հայոց արքայի, նրա գեղանի դստեր, հզոր ու առնական փեսայի՝ Տրդատ Բագրատունու, Բակուր Սյունյաց Նահապետի, Սյունյաց առնական «ճորտերի», Շիրակի, Սյունիքի, Հայաստանի բնության ու ճամփաների մասին...

Նյութի այս առանձնահատկությամբ է պայմանավորված «Հարճի» տեղը «Հեթանոս երգեր» ժողովածուում:

Վարուժանը հեթանոս շարքից անմիջապես հետո է տեղադրել «Հարճը», և դրանով, անշուշտ, հետապնդել որոշակի գեղագիտական նպատակ: Այլապես այն ևս կգետեղեր գրքի վերջում այնպես, ինչպես վիպերգերին վերաբերվել էր «Ցեղին սիրտը» հրատարակելիս: Փոխելով այդ մոտեցումը՝ բանաստեղծը գեղագիտական ներդաշնակություն է ստեղծել, տասնյակ մեծ ու փոքր հեթանոս պատկերներից հետո դրել է նույնական ամենախոշորը:

Սակայն «Հարճը», «Հեթանոս երգեր» ու «Գողգոթայի ծաղիկներ» շար-

¹ Տե՛ս Դ. Վարուժանի «Բեթանոս» իրենալի գնահատման շուրջ («Բանքեր Երևանի համալսարանի», 1986, № 8, էջ 75—86), Դ. Վարուժանի «Հեթանոս երգերի» գնահատման շուրջ («Լրաքեր հասարակական գիտությունների», 1987, № 8, էջ 25—85):

քերի պես առանձին բաժնով ներկայացնելով (որը միանգամայն հասկանալի է), Վարուժանը այն օժտել է նաև գեղագիտական հավատամք արտահայտող «Փառք սարբինային.— Ներոն կ'արբենա» նոր բնաբանով, որով և շեշտել է հեթանոս արտահայտման շրջանակներում երկի թեմատիկ առանձնակիությունը (հիշենք, որ շարքերը համապատասխանաբար կրում են «Փառք սարբինային.— Բագոս կը պսակվի» և «Փառք սարբինային.— Քրիստոս կը պատարագե» բնաբանները): Եթե Բագոսը և Քրիստոսը դիցարանական-կրոնական խորհրդանիշներ են, ապա Ներոնը պատմական է...

Բանաստեղծը որթատունկի ծանրությունը կրող, գինու արարումին այնքան նպաստող սարբինային փառք է տալիս նաև այն պատճառով, որ անգամ Ներոնի պես դաժանագույն մեկի մեջ «արբեցնող գինին» կարող է արթնացնել մարդը:

Որքան էլ «Հարճը» իր հյուսվածքով պատմական թվա, վերջին հաշվով պատմականությունը այստեղ պայմանական բնույթ ունի: Այս սքանչելի գործն իր ձևով ու խորքով հարազատ է Վարուժանի առավել բնորոշ պայմանական պատկերներին («... Ո՛վ կլալագե», «Հեթանոսական», «Ո՛ Տալիթա»), օժտված, սակայն, պատմական երանգներով ու խորհրդավորությամբ:

Արդ՝ ինչպիսի՞ն է «Հարճն» իր նյութով ու իմաստավորմամբ:

Կասկածից վեր է Տրդատ Բագրատունու մասին Մովսես Խորենացու հաղորդածի ժողովրդական ծագումը: Թեև մեր պատմահայրը հնագույն զրույցը վերարտադրել ու ներդաշնակել է իր մատյանի շարադրանքին, բայց դարձյալ նյութի վիպականությունը ակնհայտ է: Խորենացին, անշուշտ, ժողովրդական նյութն է ուղղակիորեն ակնարկում, երբ, խուսափելով վիպական մանրամասները օգտագործելուց, իր այդ մոտեցումը պատճառաբանելով «առնն ցանկասիրի» վարքը մատենագրելու անհարկիությամբ, համառոտաբանում է՝ «Ծւանդ էր տեսանել նոր զոմն Ողիսևս՝ զՊեննելուպայ զսեղեխս սատակելով, և կամ զԼապիթեայցն և զՅուզկապարկացն կոխս ի վերայ Պերիթեայ հարսանեացն»²:

Նյութի վիպական լինելու օգտին պատմահոր մատյանում ևս մի հուշող փաստ կա: Այլ առիթով, դարձյալ օգտվելով ժողովրդական աղբյուրներից, Խորենացին հերոսի վարքը պատկերավոր ներկայացնելու նպատակով այն համեմատում է Տրդատ Բագրատունու համապատասխան վարքին՝ Նազենիկին բազմականների ներկայությամբ «երիտասարդ տարփավորի» պես շամբըշելու³...

Պատմահոր էություն խորքում ապրող հայ ոգին և զննվական զգացումները մեծապես ընդգծվում են անգամ «Հայոց պատմության» համար երկրորդական այս նյութի օգտագործմամբ: Հեթանոս պատումը գնահատելով քրիստոնյայի հայացքով՝ Խորենացին, սակայն, իր շարադրանքում պահում է նրա բովանդակության անկախությունը: Նյութը պատմելու, զգալու նրա կերպն էլ առնական, հեթանոս է: Չի բացառվում նաև, որ պատմահայրը Տրդատ Բագրատունու ուժի և կամքի հատկանիշները ևս գնահատած լինի իր շատ սիրելի եռյակի՝ Հայկի, Արամի, Տիգրանի հերոսական վարքի տեսակետից:

Խորենացին այս դեպքում էլ գեղագետ է ու պատմիչ: Հանգամանք, որ շափազանց ընդգծվում է, երբ համադրում ենք զուտ պատմիչ, պատմաբան Մ. Չամչյանի վերաբերմունքին: Վերջինս հնագույն վիպասքն ամբողջապես տարրալուծում է պատմության մեջ՝ անգամ թվագրելով էական փաստերը: Այսպես, նա սուուգապես դնում է Տրդատի և արքայադուստր Երանյակի ա-

² Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, Եր., 1981, էջ 296:

³ Տե՛ս Գույ՜ տեղը, էջ 410:

մուսնութեան թվականը՝ 149, հավաստում նրանց հարսանյաց հանդեսի վայրը, Ծրանյակին անարգելու և «ի սէնեկէն» վտարելու թվականը՝ 151, նազենիկին Բակուրից խլելու և Սպեր փախցնելու մոտավոր թվականը՝ 153⁴, Մինչդեռ Խորենացին ոչ միայն պահում է վիպական եղելությունների պատճառականությունը ապահովող բոլոր փաստերը⁵, այլև հավաստում օգտագործումից դուրս մնացած «հավելյալ» նյութը: Իր «Հայոց հին գրականության պատմության» մեջ Մ. Արեղյանը Տիրանի «փեսա Տրդատ Բագրատունու զբրույցը» վերագրում է «Ավանդական վեպի» «Գրգուրթին ընդ Սըմբատայ զարմիցն Արտաշիսի և ընդ միմիանս» ճյուղին⁶:

Պատմահորից վերցրած և վիպերգին բնաբան դարձրած «Զի հոյժ գեղեցիկ էր և երգէր ձեռամբ» արտահայտությունը ոչ միայն վիպական է, այլև, հավանաբար, ժողովրդից բառացի առնված:

Մեծ պատմիչից քաղած վիպական սյուժեն Վարուժանն առավել քան վիպականացրել է, որով նյութի պատմականությունը ավելի է խամբել: Այսուհանդերձ, բանաստեղծի ձգտումը՝ պահել, անգամ ընդգծել պատմականություն արտահայտող արտաքին հատկանիշները, ակնհայտ է:

«Ասպետական կենցաղը», որ վիպերգում պանծացնում է բանաստեղծը և որը զուտ վիպական-ստեղծագործական երևույթ է, այսպիսով ներկայացվում է իբրև պատմականորեն ապրված իրողություն, մի բան, որը ևս գեղագիտական ներգործության առումով անչափ կարևոր է, որովհետև այդպիսով անհամեմատ մեծանում է բանաստեղծական խոսքի ուժը:

Վիպական հզոր տողերով է մեծ բանաստեղծը ընթերցողին առաջնորդում իր հերոսների աշխարհը՝ պատմական Հայաստանը, որը «մի ուրիշ աշխարհ» լինելու չափ խորհրդավոր է ու ուժանտիկ: Մարդուն այդ աշխարհում հարգ են մատուցում, մեծարում ոչ թե «սոսկ ոսկուց, վախից», դիրքի ու աստիճանի համար, այլ՝ ըստ նրա բարոյա-ֆիզիկական արժանիքների: Նենգությունը, ծածուկ դավերն ու դիվանագիտությունն այդ աշխարհում տեղ չունեն: Մարդիկ ապրում են ասպետական բարքերով, և «կյանքի սեղանի» մոտ նըրանց զբաղեցրած տեղը որոշում է սրի մեծությունը: «Սուրբուու մեծությունը» ուղիղ համեմատական է այդ մարդկանցից յուրաքանչյուրի զգացմունքների ու կրքերի մեծությունը, նրանց հոգեկան ու ֆիզիկական կարողություններին: Հեռաբար այդ չափանիշը դառնում է ոչ միայն մարդկային իրավունքների, այլև արժանիքների որոշման միջոց: Նույն այս չափանիշով է «չքեղ հանդեսի» մասնակիցներից մի ամբողջ զխով բարձրանում վիպերգի զխավոր հերոսը՝ Տրդատ Բագրատունին:

Բակուր Սյունյաց նահապետի մարմարյա պալատում կայացած կոչունքի պատկերը բանաստեղծական է ամենից առաջ մարդու գնահատման այդ չափանիշով, կյանքն այդ չափանիշի տեսանկյունից արժեքավորելու շնորհիվ:

Խրախճանքին մասնակից մեծանուն հայկազունների դիրքի ու աստիճանի տարբերություններն անտեսելով, շնչելով և անձի իրավունքի այդ նոր չափանիշը կիրառելով՝ Վարուժանը հյուսում է ոչ թե պատմական բովանդակություն ունեցող փոխհարաբերությունների, այլ իր ստեղծագործական երևակայության արդյունք «հեթանոս» պատկեր:

⁴ Տե՛ս Մ. Չամչյան, Հայոց պատմություն, Բ. 1, էջ 154—155:

⁵ Չամչյանը, օրինակ, ուրանում է Տրդատի՝ «ի կողմանս ամբուրեանս վարաց» դիմելու փաստը:

⁶ Մ. Արեղյան, Երկեր, Բ. 8, Երևան, 1968, էջ 70:

Ահա հասարակական կառուցվածքի իրավական հիմքի խախտումով առաջացած այդ նոր՝ հեթանոս շափանիշն արտահյուսող տողերը.

**Մազաճին շարքը արդեն Մեծամեծներն հայկազուն
Դեմ հանդիման բազմեր են, բայց ո՛չ իրենց մեծամուն
Աստիճանին համեմատ, աչ սուրբուս մեծությունը՝**

Բանաստեղծի սկզբունքը շեշտելու համար պիտի ընդգծեինք վերջին կապակցությունը: Սակայն մեզ տվյալ դեպքում հետաքրքրում է այն, ինչն իր գեղագիտական սկզբունքն առաջ մղելու նպատակով նա «անփութորեն» անտեսում, շրջանցում է: Չէ՞ որ Վարուժանը հիանալի գիտեր, որ «իրենց մեծանուն աստիճանին համեմատը» այլ բան չէ, քան հենց դարաշրջանի հանրային-իրավական հիմունքը: Սակայն մեծ բանաստեղծը նույնքան հիանալի գիտեր, որ այդպիսով ինքը պատմական-վիպական նյութից կերտում է կյանքի՝ մի էական կողմով պայմանական պատկեր, որն անհրաժեշտ է իր գիտակցության ու ստեղծագործական երևակայության մեջ եղած բանաստեղծականը մարմնավորելու համար, այդ ետոհ ու արտասովորը կրող ու մարմնավորող հերոսներ կերտելու համար:

Վիպականորեն գրավիչ ու ազդեցիկ է սկսվում «Հարճը».

**Փարճանամուտ երկու մ'իր պայտաթիմ մեջ մարմտք
Բակուր, Սյունյաց նահապետ, շքեղ հանդես մը կու տար...**

Մուտքի հանդիսավոր այս տողերից հետո ընթերցողին է ներկայացվում գլխավոր հերոսը՝ Տրդատ Բագրատունին, որը հայոց արքայի վրեժխնդրությունից խուսափելով՝ վտարանդվում է Մարաց աշխարհ:

— «Տրդատ,— կ'ըսե նահապետն,— ազս գիշեր քուկդ է իմ տուն.
Մարաց աշխարհն հեռու է, և դու անշուշտ պարտասում.
Մըտի՛ր սրահը տոնին, թող իրարու դեմ փըշրիմ
Մեր բաժակներն, ու մեր սերը մըկըրտե թող զհինն»:

Խորենացու պատումում էլ Տրդատը արքայի մահվան լուրն ստանում է Սյունիք հասնելուն պես և այդ պատճառով էլ ապստամբ-վտարանդիի իր ուղին չի շարունակում՝ «ի կողմանս ամրութեանն Մարաց»: Սակայն այնտեղ հայտնի կոչունքը տեղի է ունենում ավելի ուշ, «յաւուր միում»:

Ճոխ ու հորդուն կոչունքին անտրամադիր է Բագրատունի իշխանը: Բայց ահա նրան մեծարելու ու նրա թագավոր աներոջ կենացը մաղթելու պահին պայթում է հայոց Տիրան արքայի մահվան բոթը, որը մի պահ կարկամելով բազմականներին, սակայն, հրճվանք է բերում Տրդատին:

Այսպիսով բանաստեղծի կամքով Տրդատի Սյունիք հասնելու, խրախճանքին մասնակից դառնալու, արքայի մահով հալածական վիճակից դուրս գալու և իրեն ազատ զգալու փաստերը տրամաբանական դասավորություն են ստանում:

Հնագույն ասքի և Վարուժանի կերտած գեղարվեստական մեծ պատկերի միջև փաստական և բովանդակային տարբերությունները բխել են վիպերգի գործողության և կառուցվածքի նպատակասլացությունից, ինչպես նաև՝ բանաստեղծի գեղագիտական ծրագրի բնույթից:

Վիպերգի գլխավոր հերոսի՝ Տրդատ Բագրատունու ու նրա արքայադուստր կնոջ անձնավորությունների և նրանց փոխհարաբերությունների մասին խոսվում է երկու տարբեր առիթներով:

⁷ Բոլոր մեքերումները կատարվում են Դ. Վարուժանի երկերի լիակատար ծողովածուի 2-րդ հատորից (Երևան, 1986, էջ 64—84):

Առաջին անգամ իր հերոսին ներկայացնելիս՝ բանաստեղծը նրա անձի մասին արտահայտվում է ընդհանուր կարգով.

**Բագրատունին Տրդատն է, հզոր իշխան ու փեսա
Տիրան հայոց արքային, որ կը փախչի Մարտուտան:**

Տրդատը «հզոր իշխան» է, բայց դա չի նշանակում, թե նա «սրտեայ և ուժեղ» է, ինչպես հնագույն պատումում: Բագրատունի և այն էլ արքայի փեսա լինելն արդեն իսկ նշանակում է «հզոր իշխան»: Վարուժանը հետո, գործողության զարգացման անհրաժեշտություններ է հիմնավոր ներկայացնում հերոսին: Առայժմ՝ նրա անձը ներկայացնելիս հարկ է նաև պատճառաբանել Մարաց աշխարհ վտարանդելու ձգտումը.

**Կը փախչի աճ՝ զի կինն իր, Տիրամի դուստրն անճամն,
Գանակոժեր էր խստիվ, պապատեճ դուրս արտաքսեր,
Խուզելով, իբր անարգանք, անոր խարտյաշ գանճուրներ:**

Չի հիշվում գեղանի տիկնոջը դաժանորեն անարգելու պատճառը, որ այնքան սեղմ ու բնորոշ գծերով տեղ է գտել հորենացու մատյանում: Որ Տրդատը եղել է «այր սրտեայ և ուժեղ», բայց միաժամանակ՝ «կարճ հասակաւ և գծուժ տեսլեամբ», և Երանյակը այս վերջին հատկանիշների համար «ատեցեալ զայր իւր զՏրդատ, պշրանօք և պոստելեաւ կեայր զօրհանապազ, աւաղելով զինքն, իբր թէ շքնաղագեղ ընդ վատակերպույլ և քաջատոհմիկ ընդ վատթարազույլ բնակէ»⁸:

Եթե Վարուժանը ամուսինների փոխհարաբերություններն այսպես պատճառաբաներ, ապա հարկադրված կլիներ Տրդատին ներկայացնել «կարճ հասակաւ և գծուժ տեսլեամբ», որովհետև այս պակասությունների համար է արքայազարմ տիկինը քամահրել իր «սրտեայ և ուժեղ» ամուսնուն: Ու թեև այդպիսով կմեծանար նազենիկի նկատմամբ հերոսի ցուցաբերած վարքի պատճառաբանումը, բայց և կտուժեր նրա իղեալպես կատարյալ կերպարը, այդ կերպարի անթերի վիպականությունը:

Կա նաև այլ, թերևս ավելի կարևոր բան:

Վարուժանի կերտած հեթանոս պատկերներից միայն մեկում՝ «Ո՛ր Տալիթայում» է պատճառաբանվել հերոսի բարոյական ըմբոստությունը: Մյուս նույնաբնույթ քերթվածներում նա չի ակնարկում քնարական հերոսին ծայր անկեղծության մղող սոցիալ-հոգեբանական դրդիչները: Դրանցում («Օրհնեալ ես դու ի կանայս...», «Հեթանոսական», «Գրգանք», «... Ո՛վ լալագե») հերոսը ոչ թե ժամանակի բարոյականության դեմ ուղղակի ըմբոստացողն է, այլ անմիջական ու անկողմնակալ ինքնարտահայտողը:

Ինչ վերաբերում է Վարուժանի կերտած հեթանոս հերոսներից գեղարվեստորեն ամենախոշորին՝ Տրդատ Բագրատունուն, ապա նրա վարքագծի դրականության հիմքում ընկած է ամուսնական կյանքի աններդաշնակության փաստը:

Իր մեծատոհմիկ կնոջից շքնահատվելու, նրանից սիրո երջանկություն չըգտնելու բերումով Տրդատն էլ հայտնվում է «Ո՛ր Տալիթայի» քնարական հերոսի հոգեկան կացության մեջ: Նա էլ, կարծես, զզվանքով լի է դեպի «դահլիճներու փարթամ կանայք»: Հոգու դառնության նման պահին ու շափազանց բնորոշ հանգամանքներում է Տրդատը գտնում Սյունյաց նահապետի հարձին՝ նազենիկին և...

⁸ Մովսես Խորենացի, Պատմութիւն հայոց, էջ 236:

Անոր կապույտ աչքերում հառած աչքերն իր մթին
Խմեց երկա՛ր-փրփ ուրե՛ն մինչև մրուրն— իր գինին:
Հետո ծոցն արու քաշեց խորձ մը դեղձան մազերու,
Մոր ամպեն արու մացառվող ճաճանչներու պես աղու,
Եվ անով իր գինիոս բերանն աղեկ մը սրբեց...
Անոնք մազերն էին իր գոռոզ կնոջ՝ զոր քրածենծ
Ըրավ և ա՛յսպես ահա ծաղրեց սղն էզն անուղղա...

Սեզմ, ազդեցիկ պատկեր: Արքայադուստր տիկինը, որի Երանյակ անունն իսկ հիշատակելն ավելորդ է համարվել, «անուղղա էգ» է,— արտահայտութուն, ուր խտացվում է տիկնոջ քմահաճ ու ամբարտավան վարքը, որով և արդարացվում է նրան հասցված անարգանքը:

Երանյակի անվան հիշատակման, ամուսնու նկատմամբ նրա ցուցաբերած քամահարանքի մասին տողերը ոչ միայն կծանրաբեռնեին հյուսվածքը, այլև ընթերցողի ուշադրությունը կշեղեին վիպերգի գլխավոր դեմքից՝ Նազենիկից, որին պատկերող ամեն մանրամասն այնքան անհրաժեշտ է «հեթանոս մեծության» գաղափարի խտացմանը, այդ գաղափարը նոր երանգներով հարստացնելուն:

Այսպիսով, հնագույն պատճառարանումը շրջանցելու հիմքում գեղարվեստական մտածողության առումով ավելի էական բան կա: Բանաստեղծն շտապում է փակել աբսոլյուտեթ հարցը՝ սուպրեզի մեծությունը հարեհին տրամադրելու համար:



Վիպերգի հյուսվածքում երկու ընդարձակ տեսարան (խրախճանքի և Նազենիկի ու Տրդատի փախուստի) կրում են բանաստեղծական ասելիքի ողջ ծանրությունն ու կենսական հարստությունը: Ստեղծագործ երևակայության արդյունք գործողություն-պատկեր լինելով՝ հենց դրանք են խտացնում ու արտահայտում մարդու հեթանոս մեծության փիլիսոփայությունը: Սրանցից առաջինը շքեղ է, կենսականորեն հարուստ ու մարդկային հորդացող ավյունի ցուցադրմամբ ազդեցիկ, իսկ մյուսը հատկանշվում է դրամատիկ ապրումների հագեցվածությամբ ու խորությամբ:

Իր գեղարվեստական մեծությամբ մեր բանաստեղծության մեջ նմանը չունի Վարուժանի կերտած խրախճանքի տեսարանը: Բռնկուն հույզերով, շիկացած կրքերով ու կենսական ավյունով առավել լեցուն զանգվածային կերպարումի մի այլ պատկեր անհարին է երևակայել:

Ահա խինդ ու հրճվանքով բարախող խրախճանքը բնութագրող մի ծիծաղկուն երկատղ.

Պաշտօնն մեք ծով մը կա ծիծաղներու և լուսի,
Որ գաղափարն ծուփ առ ծուփ դռներն արու կը թափ:

Այս տողերին հաջորդում են կոչնականների հոգու լույսն ու ջերմությունը հետզհետե թանձրացնող նորանոր հրաշակերտ տողեր, ի թիվս որոնց և Սյունիքի ազատ զավակների հետևյալ կենսախինդ սրամտությունը, որը գեղարվեստական պատկերի հեթանոս հագեցման սքանչելի արտահայտություն է.

— «Ըզավճիի սիրտ օտեճք,— կը գոչե ճորտը Բազի,—
Որ օմննաճք վագրի լյարդ»: — «Ես աղ մասիմ ավելի,—
Կը կատակե հանկարծ մին,— կընտրեմ սիրտը կնոջ»:

Հերոսի՝ Տրդատ Բագրատունու մարդկային կրքերի մեծությունը բնական

ու բնորոշ է ներկայանում ամենից առաջ այդ մթնոլորտի շնորհիվ: Այն ողի-
սևսյան շափերի կարողութեան ու մեծութեան պատճառաբանման հիմքն է՝ հո-
գեբանական ու բարոյական առումներով:

Խրախճանքի պատկերումը Վարուժանն սկսում է, եթե կարելի է ասել,
տոնային ամենաբարձր հնչումներով: Նրանից ստեղծագործական գերագույն
լարում է պահանջվել այդ բարձր պաթոսը մինչև վերջ պահպանելու համար:
Եվ, իհարկե, Մեծ Արվեստին բնորոշ հրաշքը կայացել է: Ընթերցողը ողջ էու-
թյամբ համոզվում է, որ Վարուժանն անկարելի իրագործելու հնարավորու-
թյունների և ունակութունների բանաստեղծ է: Զէ՞ որ ճիշտ անկարելին է
իրագործվում ու տարածվում մեր երևակայության առաջ:

Առանց այն էլ բարձր պաթոսով սկսված վիպական հյուսքն առաջ է մղ-
վում հետևողական ուժգնացումով, որը մեծագույն հիացում է բերում ընթեր-
ցողին:

Անընդհատ զարգացնել ու լարել գունագեղ ու կաշուն տեսարանը, հետըզ-
հետ ընդլայնել նրա շրջանակները՝ հասցնելով լայնահուն համայնապատ-
կերի և տեսադաշտում պահել զխավոր հերոսներին այնպես, որ նրանք ցու-
ցադրվեն ու արտահայտվեն իրենց ֆիզիկական ու հոգեկան ողջ գեղեցկու-
թյամբ, իրենց հեթանոս խառնվածքի ողջ մեծությամբ՝ ահա որտեղ է դրսևոր-
վում Վարուժանի բանաստեղծական ամենակարողութունը:

Խրախճանքի պատկերման մեջ բանաստեղծի ստեղծագործական հիմնա-
կան խնդիրը նազենիկի պարի նախապատրաստումը և այդպիսով՝ հերոսուհու
բուն ցուցադրումն է: Այս հետապնդումն իրագործվում է երկու փոխներթա-
փանցուն ուղիներով՝ պատումի տեղաշարժով՝ պարը որպես հեթանոս խրախ-
ճանքի կենսական տարր հասունացնելով և խրախճանքի մթնոլորտը հետըզ-
հետ շիկացնելով, հույզերի բարձրակերտ նշանավորելով: Այդպիսով նազե-
նիկը հրապարակ է գալիս և՛ իրերի օրինաչափ բերումով, և՛ կոշնականների
ներքին-հոգեկան վերելքի պահանջով:

Ստեղծագործական այս կողմերի միաձուլումով բանաստեղծը հասնում է
թե՛ բարձր գեղարվեստականության և թե՛ գեղագիտական նպատակասուլացու-
թյան:

Այս իմաստով դարձակետային է այն պահը, երբ արքայի մահվան բոթից
կերպարանափոխված Տրդատը բուռն թափով մղվում է դեպի կոշունքին եռք
ու ավյուն հաղորդող գինին:

— «Թուն՝Աք,— ըսավ,— ու տոնենք Արշակունի գաղթերուն
Թավալումներն անդունդի և մեղկանքի մեջ փրցուն»:

Այս «հակահայրենասիրական» տողերը այլ ենթաբնագիր ունեն: Հերոսը
կրթոտ ծառանում է այն ուժերի դեմ, որոնք բռնանում են մարդկանց ապրելու
նախասիրութուններին: Պատահական չէ, որ նույն այդ պահին է կայանում
Տրդատի ու նազենիկի՝ արանցից ու կանանցից ընտրյալների՝ առայժմ «հե-
ռակա» հանդիպումը.

Եվ հագիվ հագ շրթներուն դրավ գավաթն հրահոսան՝
Վերնատան մեջ աչքերն իր գույգ մ՝ աչքերու դիպեցան:

Այդ «գույգ մը աչքերը» պատումի առանցք դառնալուց ու կոշնականներին
թովելուց առաջ նախ իբրև ոգեղեն հայելի անդրադարձնում են Տրդատի այ-
րական մեծութունը.

Կին մը իրեն կը նայեր, կը զգար սրտին մեջ շքմոր.
Իր կազմին վրա կ'հիանար, առնզեղ, խրոխտ և հզոր:
Հըզոր՝ վիզովն առյուծի և թիքերով աստղաճեղ՝

Որոնց բոցեւ աչրելու համար ամօգամ մ' իսկ բավ էր
Որ անոնց մեջ հանդըզներ առնաբաղձ կից մը Ըայի:
Հըզոր՝ մարտիկ գըլուխով, լայնշի լանջքով անարդի
Որ ճոշանից մեջ կ'ոռեր կոհակի պես փըրփըրազեղ.
Հզոր՝ թիկնով մեծադիր, բազուկներով առնազեղ՝
Որոնց միջև կը սիրեն կիներն իրր օձ գեղաձազ
Բյուր ձևերով գալարվիլ ու ծըվարիլ ու տաքնալ:

Այս բնագեղ տողերը անասելի ուժ են հաղորդում Տրդատի ու Նազենիկի
փոխձգողութեանը՝ նրանց բուն հանդիպումը դարձնելով անխուսափելի:

Վերնատան կիներ սարսուռաց: Տրդատ մեկ ձեռքը հեռած
Սեղանին վրա, մյուսով տաշտը բերնին, գլխիբաց,
Անոր կապույտ աչքերուն հառած աչքերն իր մթին
Խմեց երկա՛ր-փրփուրեն մինչև մրուրը— իր գինին:

Իդեալի մեծութեամբ անհատը մշտապես ընդունակ է որևէ կերպ իր էու-
թյան արտասովորութիւնը ցուցադրելու.

Հետո ծոցեն դուրս քաշեց խորձ մը դեղձան մազերու
Մութ ամպեն դուրս մացառվող ճաճանչներու պես աղու.
Եվ անով իր գինիոտ բերանն աղեկ մը սրբեց...
... Եվ ազլեցուց ամենքն աչդ իր անսովոր գործին վրա:

Ինչքան էլ, սակայն, Տրդատի անձը նշանավոր լինի, կեցվածքը առանձ-
նահատուկ և արարքն ապշեցուցիչ, միևնույնն է, նա չի կարող երկար մնալ
խրախճանավորների ուշադրութեան կենտրոնում: Կյանքի հետաքրքրութիւնը,
գեղեցկութիւնը և հմայքը, մանավանդ հեթանոս կյանքի՝ կինն է.

Հազիվ Տրդատ սեղանին դրավ գավաթը թափուր՝
Լույսերու հոծ ծովուն մեջ թնդաց սրահն ընդհանուր.
— «Վարձա՛կն ահա, տեղ բացեք, վարձա՛կը, վարդ տեղացեք
Մազերուն մեջ, ոտքին տակ մարգարիտնե՛ր լեցուցեք»:

Նա է՝ Բակուր նահապետի հարճը:

Վարձակն էր ան, Նազենիկ, Ըազեղազեղ անուճով...

Բայց «կնոջ սիրտը» անձնավորող Նազենիկի հրապարակ գալը և նրա
հրաշք մարմնի դաշնեբզը ցուցադրելը փոքր-ինչ «ձգձգվում է»: Վարուժանը
հյուսում է «մեհենական դարերու» կենցաղի մի պատկեր, որով և լավագույնս
պատճառաբանում է Աստղիկին ձոնվող պարը՝ «հաճույթը այդ մսեղեն» ու
պատկերն ավարտվում այն պահին, երբ լայն պարասպարեզը վարձակին է
տրամադրվում: Այս պահից արդեն շքնաղ հարճի մարմինը կենդանի նվա-
զարան է, որի թովիչ ձևերի դաշնեբզը, միաձուլվելով «դաշնեբզին հետ լա-
րերուն», վեր է ածվում «հարաճուն համանվագի» ու շուայլորեն տարածվում
վայելթից ուռճացած հոգիների վրա:

Կոչնականները լռիկ հիացումով քարացած,
Մարմնակարկառ, ազշտայալ, աչվներով լայնաբաց,
Կը դիտեն գինք: Նազենիկ անխ կ' օրորե մեղմորեն՝
Ակապատրե ուտերում վրա գըլուխն հըրեղեն՝
Ներկաներուն շրջելով զույգ մը աչքերը ազվոր՝
Ուր կ'ընկղմի մարդ հեշտին, բայց դուրս կ'ելլե վիրավոր»:

⁹ Նկատենք, որ վերջին երկտողով կերտված պատկերը լիովին արժանի է Քառա-
դրվելու Հովհ. Թումանյանի նույնառունչ սքանչելի պատկերին՝ Թմկա տիրուհու հմայքը
բնութագրող.

Մով եմ աչքերը Ջավախքի դատեր,
Ու կորչում է մարդ նրա հայացքում...

Խրախճանքի տեսարանը, հեթանոս կենցաղի զանգվածային հզոր արտահայտություն լինելով, ըստ էության, այնուամենայնիվ մի ստեղծագործական խնդիր է հետապնդում՝ նախապատրաստել և հասունացնել Տրդատի ու Նազենիկի փախուստը...

Հիանալի է, երբ հերոսի հոգու ծանր խռովքի փարատվելը, վտարանդիություն կեղեքիչ զգացողությունից նրա ազատվելն ու կոշունքի գաղջ մըթնորոտին տրվելը, Նազենիկի ցուցադրած կանացի հրաշքով հափշտակվելն ու արբենալը, հույզերի անասելի լարվելը և, վերջապես, գեղեցկուհու ինքնաբուխ մղվելն առ Տրդատ՝ նախապատրաստում ու բուռն թափով խթանում են «ասպետական բարքերից» այն մեկի իրագործումը, որ Վարուժանն անվանում է «հափափումներ կիներու»:

Հոգեբանական ու վիպական այս հանգամանքները այնքան են պատճառական ու բնորոշ, որ դրանցից դուրս Տրդատի ու Նազենիկի սերը կարող էր նկատելի չափով կորցնել իր բանաստեղծականությունը:

Այս ընդարձակ երկը կերտելիս ևս ամենուր Վարուժանը հարազատ է մնում իր «քանդակային ոճին» և կյանքը արտահայտում է ավելի ծավալային դրվագումներով, քան բառային ատաղձով: Սակայն բնության ամենամեծ հրաշալիքը՝ կինը, պատկերելիս արդեն նա բուն քանդակագործ է՝ ամենահանճարեղի հմտությամբ, որն իր մուրճի ու հատիչի բացահայտած ձևերն ուղղակի թաթախում է բարախուն հույզերի մեջ.

Օ՛, այդ իրանը ճապուկ ելևէջովն ստիճքին՝
Որոնց մեջ կաթն իսկ կ'ետա հուզումներն սաստկագին.
Օ՛, թևերն իր լուսածղի՝ օձերու պես պարարակ՝
Կարծես երկար կրթրված կախարդ սրինգով մերդաշնակ.
Եվ գիտերն իր սարսուզեղ, գեր երաստանը շամբույշ.
Եվ բուրիճն իբր առանցք մեջքն ուռիի պես թընթույշ՝
Որուն շուրջ մարդ պիտ' ուզեր բաղեղի նման փաթթովի,
Եվ վերջապես հյութասպառ բաղեղի նման թառամի:

Կամ՝

Երբոր ետև կը թեքի՝ կուրծքին վրա հույշեմ
Բուրի պես կը դիզվին ռսախնքներն իր սարսուռեմ.
Եվ վարսերն իր վիժանուտ, ուսերն ի վար հռակով,
Կ'երթան փրփրիլ հատակիմ, հոն կազմելով ոսկի ծով...

Արդեն գիտենք սիրո հեթանոս կարգախոսը՝

Էզ վագրիմ հոտն ըմբռնել արու վագրի՞ն է տրված:

Ահա ինչու հոգնած ու քրտնած Նազենիկն իր վերջին ճախրանքից հետո հայտնվում է Տրդատի ծնկին ու սրտով տրվում հզոր տղամարդու փայփայտանքին.

Տրդատ մատները անոր համբուրելով մի առ մի
Եվ շամբռելով անոր հետ գերդ սեղեխներ վազեմի.
— «Նամասպե՛տ, ո՛վ է,— ըսավ,— վարձակը այս լուսաստիճք:
... Այս կիճն իճն տոտ, եթե չէ օրեճ՝ որ մենք ընեճք վեճ.
Արշաղույսին թող մեկնիմ՝ արշաղույսն այս գրկիս մեջ»:

Ինչպես որ Բակուրն է հանուն Նազենիկի Վրաց աշխարհում («ուր կիները կը ծաղկին վարդի պես») նիզակով մաքառել «մարտիկներու ընդդեմ վեճ», այնպես էլ Տրդատն է Բակուրից նվաճում գեղանի կնոջը:

Ըստ խորենացու, Տրդատը կոշունքի սրահից իր իշևանն է գնում և այնտեղից, անմիջապես՝ «ի ձի ելեալ հանդերձ հարճին ի Սպեր»:

Վիպերգում Բակուրի վիրավորվելուց առաջացած խառնաշփոթի պայմաններում Տրդատը նազենիկի հետ պայմանավորվում է վաղ առավոտյան փախչել և խրախճանքի սրահը թողնում է՝ անդարձ մեկնող ձևանալով...

Ահա և բաղձալի արշալույսը: Տրդատը երջանկության ճամփին է՝ «արշալույսն իր գրկին մեջ»:

Գեղարվեստական լուծման և բովանդակության հետագա շիկացման ինչպիսի նպատակասլացության է հասել Վարուժանը, երբ, Տրդատի ու նազենիկի փախուստը նախապատրաստելով ու հունի մեջ դնելով՝ հյուսում է ասպետական կենցաղին ձևաված քնարական շեղումը և արմատապես ընդգծում քաղաքացիական իր կեցվածքը: Վիպերգի էպիկական տարբերից հորդող հոգեբուխ գեղոն է դա՝ «ասպետական կենցաղին»՝ երազված մի կյանքի, որն անցյալ դարերում չունեի և չէր կարող ունենալ դրսևորման իր հասարակական-իրավական, հետևաբար և իրական հիմքերը:

Բանաստեղծը «փառք» է տալիս «ասպետական կենցաղի» մեծություններին, որոնք այնքան փրկարար կլինեին իր կարեվեր դարին: Ընթերցե՛նք «փառքերի» այդ շարքից տողեր, որոնք առավել արմատաբար են պատճառաբանում վիպերգի գործողության հեթանոս ոգին.

**Փառք Թեզի միշտ, ո՛վ դարևի անվտանգամ կենցաղին.
Ուր մարդիկ հզոր և ամկեղծ էին մամն գինիին:
... Փառք ձեզի միշտ ավարներ, հափափումներ կիմերու՝
Որոնք տվին իրենց տարփն ու համբույրները աղու
Առյուծներու քաջության և ո՛չ ոսկի հորթերուն...**

Քնարական այս շեղումով բանաստեղծը մի կողմից հոգեբանորեն վերհիմաստավորում է մինչ այդ մատուցած նյութը, մյուս կողմից՝ նոր թափ հաղորդում մարդկային ապրումների ու ձգտումների մեծության հետագա ցուցադրմանը:

Բարբերի ծայրաստիճան ապականության հետևանքով նորագույն դարում մարդիկ այլևս անմիջական ու շիտակ չեն: Այժմ անկեղծությունը մի դիմակ է՝ բարոյական շահատակությունները թաքցնող: Սա է կյանքի սկզբունք դարձել ամենուր՝ առօրյա խնդիրներից մինչև սիրո խոստովանություն, ամուսնական առագաստ...

Իհարկե, քնարական այս շեղումը նաև մեծապես նպաստում է սիրահար զույգի փախուստը պատկերող դրվագի դրամատիզմին, այդ դրամատիզմով մեր ողջ էությունը համակելուն: Չէ՞ որ այդպիսով մինչև վերջ արժեքավորվում է մարդուն հատուկ այն բացառիկ գեղեցիկը, որ չկա մեր կյանքում, բայց որն, ահա, վտանգվում է... մեր աչքերի առաջ ու հոգու մեջ:

Քնարական այդ խորհրդածություններով Վարուժանը հիմնավորում ու մեծարում է հանուն սիրո երջանկության ցուցաբերվող անձնվեր վարքը, երջանկության համար կյանքով հատուցելու պատրաստակամությունն ու սրխրանքը:

Վիպերգի բանաստեղծականությունը որևէ չափով չի տուժում, երբ խորհում ենք, որ «ասպետական դարերը» պատմական վավերականություն չունեն, դրանք զուտ ստեղծագործական երևույթ են՝ բանաստեղծական իդեալի արտահայտման միջոց: Զարմանալու ոչինչ չկա, որ բանաստեղծը կրթոտ հավատով է խոսում դրանց մասին, որ այդ համոզվածության հիմքում ոչ թե պատմական համապատասխան փաստերն են ընկած, այլ իր համապարփակ էություն մեջ ապրող ծով հավատը մարդու ուժի, գեղեցկության ու ձգտումների անկեղծության վերաբերյալ:

Զմոռանանք, որ դյուցազնակտն, ասպետական դարերի վիպական (ոռ-

մանտիկ) կարոտարադժուկները բանաստեղծի մեջ սաղմնավորվել էր ուսանողական տարիներին, «հին երկերի» ընթերցումից, այսինքն գրական ճանապարհով և ոչ թե պատմության գիտական ճանաչումից:

Ահա ինչու է նվազ կարևոր այն, թե Վարուժանն իր այս հզոր ստեղծագործության մեջ ինչ դար, կյանքի ինչ ոլորտ է պատկերել: Բայց դրան հակառակ՝ անշափ կարևոր է գիտակցել, որ վերանայով առանց այն էլ պայմանականորեն պատմական հիմքից և «ասպետական կենցաղի» տեսանկյունից նյութն իմաստավորելով, Վարուժանն ստեղծել է երգը ժամանակների հեռուներից եկող ու հավերժող մարդ էակի: Եվ անթառամ երգը...

Ընթերցողի առջև ողջ մերկուսյամբ բաց է հարազատ Շիրակ դարձող հզոր ասպետի հոգին՝ ապրումների ու հույզերի ելման պահից:

Վարուժանը շափազանց զգայուն է պատումի լիարյունության, եղելությանների, դեպքերի, անգամ նրբերանգների հարցում: Մի բնորոշ օրինակ, ուր «դիպվածով» փորձության է ենթարկվում հերոսի ասպետական բնավորությունը: Տրդատի ձին իր թանկ ավարով սրընթաց վազքի մեջ է, բայց ահա, ասես «գետնի ընդերքեն», հայտնվում են հալածողները՝ Բակուրի գլխավորությամբ:

Երեկ գիմվով հղփացած, աչսօր արվամ հանկանն...

Ինչպե՞ս կկողմնորոշվի Տրդատն այս ճակատագրական պահին. ահաբեկված կփութացնի՞ իր նժույգի մրրկարշավ վազքը, թե՞... Կսենք հերոսի մեջ խոսող ձայնը.

**Հա՞րկ էր արդյոք ճակատիլ. ո՛չ. պիտի կռիվն ունենար
Անձուկասար հաղթանակ, թեև վըսեր մ'հավասար:**

Այո՛, ճակատումը կլիներ իր զգացմունքներին հավասար մեծությամբ մի քայլ, բայց և՛ ապարդյուն քայլ: Ուրեմն գերադասելի է երջանկության ուղին... մահվամբ հղի:

**Ու Տրդատես թոթվեց սանձն երիվարին հողմալաց,
Երկրադողող թնդաց դռույթն, փոշին ելավ, և սուրաց,
Ու սկսավ հազածումն հսկաներուն սանձարձակ:**

Սայր է առնում բացառիկ դրամատիզմով հագեցած մի երկխոսություն, երբ նազենիկը, Բակուրի կատաղի վրեժխնդրությունից սարսափած, Տրդատին պաղատում է ամեն կերպ փրկել իրեն, իսկ Բագրատունին նրան հուսադրում է իր առնական հորդորներով, օրորում մոտալուտ հաղթանակի քաղցր հույսերով:

Որքա՞ն ողբերգականորեն կանացի են նազենիկի հոգուց բխած պաղատանքի խոսքերն առ Տրդատ: Տրդատի ու նազենիկի սիրո մեծարումով բանաստեղծը ոգեշնչորեն մեծարում է առնականությունն ու կանացիությունը՝ իրրև կյանքի մեծության անմահ պայմաններ:

Հերոսների հոգիներին համատրոփ, նրանց խիզախումով հարբած ընթերցողի համար ամեն ինչ արժեն ստույգ մահի առջևից փախչող քաջի անկորում կամքն ու հաղթանակի հավատով ողողված հորդորները.

**— «Հեղեղին մեջ մագերուղ փակե աչքերդ, իմ Աղվոր,
Եվ կուրծքիս վրա քընացիք օրորումովն այս հզոր...»:**

Սարսափի ու հուսո, ողբերգական ու լավատեսական ապրումներից հյուսված վայրկյանները ձգվում են դարի պես: Թվում է, թե մեկ սեր չէ, մի զույգի երջանկություն չէ վտանգվողը, այլ սիրո ու երջանկության համայն հնարավորությունը:

Քայց ահա՛ երզանիկ պահը. տեղանքը անսպասելի պատնեշ է բարձրացնում հալածողներին առջև.

**Բազուրի խումբը կեցավ, հառաչակույզ, սգնալատ,
Պատառություն խորուկով ամբողջովին բացավառ...**

Վայրկյանը բոլորովին այլ է ընթերցողի համակրանքը վայելողներին՝ Տըր-գատի ու Նազենիկի համար: Նրանց կրծքի տակ (ինչպես և ընթերցողի) մեղմվում են «երկյուղի անգութ տրոփումները»: Դա մի ակնթարթ է միայն, լուսավոր մի ակնթարթ, երբ անսպասելիորեն անգամ հոգեբանական այլ գունավորում է ստանում կործանումից մազապուրծ զույգին շրջապատող բնությունը, երբ մեր ոգեշունչ երևակայության մեջ փրկության ծագող արևը, միջօրեի հարհրան արեգակի ցոլքերից բռնված՝ լեռնալանջերի կապույտ ալիքների վրա բերկրանքի գորգ է հյուսում:

Հավատեսություն ի՛նչ զարմանալի ուժով է Վարուժանը կիզակետի բերում սիրո ու ազատության ծարավը: Մի՛ քայլ, մի՛ վճռական քայլ, և Տրգատի առնական լավատեսությունը կառարկայանա, մայր բնությունը ծիածանի գույներով կպսակի անձնվեր հոգիների սխրանքը: Սակայն արվեստագետը կանխագծել է լավագույն լուծումը: ... Վաղաժամ էր տաղանակների հորձանքից զուրս պրծնելու մեր հուսավառումը: Բակուրը մի վերջին լարումով պիտի արձակեր ճակատագրական նետը՝ «այնքան զորեղ, թիրախին այնքան ճշգրիտ»:

Նծույգի խելահեղ վազքով տարված դյուցազունը չի զգում իր զբաժնավոր թևի տակ ամփոփված պախրայի թառանչը, երբ տառացիորեն վայրկյաններ էին բաժանում փրկարար հանգրվանից.

**Իջևան մ' է կառուցած սահմանին վրա Օիրակին,
Գործ արքունի ճոխության, մեծազանգված, ահագին:
... Ավասիկ այդ իջևանն է՝ ուր կու գա Տրդատես
Ապաստանից մետերում և տրեւոց դեմ հրկեզ:**

Այստեղ է Բագրատունի իշխանին հայտնի դառնում, որ իր գրկում չըբնաղ Նազենիկի սառած մարմինն է լող, և նա ապրում է «կատաղությունն ահավոր ասպետական խաբկանքին», որին՝ հոգեկան այդ բուռն փոթորկումին հաջորդում է ծանր ողբերգության ազդեցությամբ աշխարհն ու իրերը սթափ տեսնողի խորհրդածությունը՝ կորստի մեծության ու անդարձության մասին, այն քր

**... Կիճճ ազգ մեկ բարբառիմ մեջ աչքիմ
Գեղեցկության հերանոս ուներ գանձեր անգիմ,
Թե իր սարսիճն էր լոզցած երկնի շաղկը անշեջ,
Մեղր ունք իր թռչիմ առկ, լուս ուներ իր ծիծիմ մեջ
Օվ իր ձեռքիմ տւ սառչիմ մառմեքուն ծաղրն էր խլտացած
Տիեզերքն այս հարդարող ճարտարությունն առեղծված.
Օվ խորհեցավ վերջապես՝ սրահիմ մեջ Բակուրիմ
Աստվածացումն իր միտիմ, փորտկունները պարիմ...**

Այսպես է, դժբախտաբար. որպեսզի մարդ լիովին չափի երջանկության մեծությունը, պետք է կորցնի այն... Այս նույն իմաստությամբ է պատճառաբանվում հերոսի հուզական արձագանքը.

Օվ առջի հեղ ըլլաղով ապառած մարդն այդ լացա՛վ...

Վարուժանն ընթերցողին բարձրացնում է մինչև ողբերգության տրդատյան զգացողություն և եթե հերոսի ապրած ծանր դրաման համզգալով նա, այնուամենայնիվ, համակվում է անհուն զմայլանքով, ապա դա էլ արդյունք է

գեղագիտական ուժեղ ներգործման: Ընթերցողը ողջ էությամբ ապրում է այն խոր ճշմարտությունը, ըստ որի՝ խիզախման ուժգնությամբ, նպատակի մեծությամբ ու վեհությամբ է որոշվում կործանման ողբերգականությունը և ողբերգականի՝ իր հոգու վրա ունեցած գեղագիտական ներազդման շափը:

Որքան խոր հիմքեր կան վիպերգում՝ ողբերգականությունում համակվելու և հոգեպես բարձրանալու այդ գեղագիտական հաշվեկշիռ-կատարսիսի համար:

Տրդատի ու Նազենիկի սիրո փոխհարաբերությունը, որքան էլ դրսևորմամբ մասնակի, այնուամենայնիվ բարոյագիտորեն այնպիսին է, որ ոչ միայն չի դադարում ընթերցողին միանգամայն հասկանալի լինել, այլև նրա համար մնում է խորապես բանաստեղծական ու վեհ: Խոստովանենք, որ քննական հայացքով ընթերցելիս ևս մեզ մշտապես ուղեկցում է հիացմունքը: Դա գեղարվեստական մեծության ստույգ պայման է:

Գեղարվեստական ամբողջությունը բնության շափաբերության հիմունքն ունի: Այն սկսվում է խոստովանալից լուսաբացի պես, հուսաբեր ու պարզևող օրվա պես իր անակնկալները պարզում և մայրամուտ հակվում՝ խորհրդավորությանը հանձնելու արևազօծ ցերեկվա իր ողջ արարումը:

Ճիշտ այսպես է ավարտվում Վարուժանի գլխավոր երկը:
Եվ մինչ նա՝

«Տրդատ սրտեն շանթահար՝
Անոր դեռ թարմ դիակն առած գրկին մեջ կու լար»,

«անտառարնակ շորս քուրմեր» հոգեվարք ապրող շանթահար բարդու «բունին ճիշտ ներքև» փորում, ավարտում են Նազենիկի սև փոսը:

Հավերժ վերածնվող բնությունը հայոց հանճարի այս չքնաղ երկում ևս մայրական գորովանքով է գիրկ բացում իր սահմանած օրենքներով առաջնորդող և կյանքից ողբերգականորեն հեռացող անհատին, ընդունում նրան ու ձուլում իր հավիտենական խորհրդին.

Իջևահին քով տնկված վաղնջական այն բարտին
Վերընձյուղում մ'ըստացավ՝ թուծելով վերքն իր սրտին՝
Երբոր Հարճին լույս մարմնույն ավիշներով կենսահորդ
Քաթախվեցան հողին տակ արմատներն իր խորդուրորդ:
Եվ ըսվեցավ թե անոր տերևուտքին մեջ դողդոջ,
Չքնաղ հոգին վարձակին քընակեցավ դար մ' ամբողջ,
Լուրճակային ծպտեցավ, ծոծրակին վերքը ավալ ցույց,
Հավերուց հետ պար եկավ, բամբիռներն իր հնչեցուց:

«Հարճը» մեկն է բանաստեղծական այն լավագույն կերտվածքներից, որոնք ընթերցողին խոր հիացմունք և հոգու արբեցում են պարզում:

Х. Г. ВАРТАНЯН—Поэма Д. Варужана «Наложница».—В статье затрагивается ряд вопросов, связанных с поэмой Даниэля Варужана «Наложница». В частности, раскрывается историческая основа поэмы и прослеживаются особенности ее творческого переосмысления Д. Варужаном. С этой точки зрения анализируются образы главных героев поэмы—Назеник и Трдата Багратуни.